

ՃԱՇԱԿ ՈՎԿԵՐԵՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ. ԳԻՏՆԱԿԱՆ. ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ
ԱՅԼՈՎՔՆ ՀԱՆԴԵՐՁ

Ի Ն Դ Ի Ն Ա Ռ Ա Վ.

Ա. ԽՈՅԵԹԻԱ ԿԵՐՊԴԵՋԵՆ և Յ. ԳՈՒՐԳԵՆԻ

Տ Ա Ր Ի Բ .

ԹԻՒ Է . — 1 ՑՈՒԼԻԾ



Ի Կ. ՊՈԼԻԱ

Ա. ՅՈՎԱՆԻ Ա Մ Ա Յ Ա Յ Ա Յ

1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ԳԱՏՐԱԿԱՆ

Պատմութիւն Հայ մատենագլուրեան Ա. Մ. Գ.
Արդի Մազղեզունքը որ Պարսկին կոչին Ա. Մ. Գ.

ԳԻՏՆԱԿԱՆ

Ընթացք եւ յառաջնորդիմութիւն Բնախօսութեան Յ. Գ.

ԲԱՆԱՍՈՒՐԱԿԱՆ

Ի Կրոց Տելեմաքայ (Հերլ) Ա. Գ.
Զորիք եւ Արագակը Ա. Մ. Գ.
Առանձինն բանը Հայերէն լեզուի (Գ. եւ Պ.) . . . Յ. Գ.



ՃԱՇԱԿ

ԱՍՏՎԱՅԻՆ ՊՊՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՅ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԹԻՒՆ

ՍԿԶԲԱՆԸ ԱՆՑԻ ՄԻՆՉԵՒ ՅԱՌԱՋԻՆ ԿԵՇ ԱՆԴՐ Ե. ԴԱՐՈՒ

Հրեայք բռնադատին դառնալ ի պաշտօն կռոց :

«Առաքէր թագաւորն զԱթենոբիոս ծերունի ստիպել տագնապել զՀրեայսն անցանել զհարցն օրինօք և յօրինսն Աստուծոյ այլ մի՛ եւս յամենալ, պղծել զտաճարն Երուսաղեմի , և անուանել զնա յայնմ հետէ յանուն հիւրասէր որմըզդական դիցն վանատրի , և չարաչար դժուարին նեղութիւնս ի վերայ ազգին հասուցանել : Իրրեւ տօն հասանէր սպանդարամետական պաշտամանն , տագնապէր զնոսա պսակեալս թաւ ոստօք Սպանդարամետին կաքաւել , և այնոցիկ որ ոչ յանձն առնուուին զոհել՝ հրամայէր անդէն սուր ի վերայ դնել . և անդ էր տեսանել զշտապ տագնապի տառապանաց չարչարելոցն : Նամակագիր եղեն զերկուց կանանց վասն զորդիս իւրեանց թրիատելը , ածին զնոսա վազվազակի , ըզ մանկունսն զստեանցն կախեցին զմարցն , և զնոսա ընդ հրապարակսն առ առակէ շրջեցուցանէին . ապա ի պարսպաց անտի ի վայր հոսեցին : Կէսքն երթեալ գաղտուկ յայրսն մօտաւորս՝ զշաբաթուց աւուրսն անցուցանէին , և իրրեւ ի վերայ հասանէին , կենդանուոյն խանճատեալս հրով սպանանէին : »

«Այլ ես աղաչեմ զամենեսեան որ զգիրսդ յակն արկանիցէք , մի՛ ինչ վասն ազգին խղճիցէք , և զվիշտս զայս ամենայն առ սատակման տոհմին համարիցիք , այլ ի խրատ ազգին մերոյ : Զի ոչ եթէ որակս առ այլ հեթանոսս երկայնամիտ լինի Աստուած , մինչեւ լցցեն զշափ մեղաց իւրեանց , և եկեսցեն հասցեն ի դատաստանս անհնարինս , այնպէս և առ մեօք կա-

տարէ զամենայն , այլ մօտ առ մօտ խրատէ , և արագ արագ տծէ զողորմութիւն : Զայս բանս ընդ ձեզ վասն յիշատակի բանիցդ խօսեցաք . արդ անդրէն ի գլուխ պատմելոյն մատիցուք :

Եղիազարոս ծերունի բռնադատի ուտել խողենի , և չառեալ յանձն մեռանի քաջութեամբ :

«Եղիազարոս այր մեծ ընդ առաջինսն ի գնդի անդ , լցեալ աւուրբք , ծերացեալ հասակաւ , գեղեցիկ երեսօք , ածեալ գայլ ի բերան ստիպէին ուտել խողենի : Նորա ի մոի եղեալ , յամառեալ պնդեալ սրտիւ՝ յանձն առ ընդունել զմահ քաջ անուամբ քան զկեանո խղճիւ և ընկերաց ստգտանելով : Ընտրեաց ինքնակամ հոսանել ի տանջանս . ձեռներէց լինէր թքանել անարդել զպաշտօնս նոցա , որպէս օրէն է համբերողաց բացէ ի բաց անարդել ինչ զոր ոչ է օրէն յանձինս մատուցանել : Իսկ այնք որ պատրաստեալ եկեալ էին , ինքեանք առ տկարութեան մոացն , վասն անձնասէր բարոյից , ծանօթ եւս լեալ առնն աւագութեան , առեալ զնամեկուսի՝ զհաստատեալ միտո նորա ի հրապոյրս ցոփութեան գարձուցանել ջանային : Յանձն տռ , ասեն , զհրաման թագաւորիդ , և քեզ այլ միս մատուցուք , զի լրտցես զկարծիսն , և ի մահուանէդ ապրեսիս : Նա գեղեցիկ խորհուրդս հաստատուն յանձին եղեալ , զարժանի հասակին , ըստ ծերութեան մեծութեանն , ըստ երեւելի վայելչութեանն , ըստ զուարթածաղիկ ալեացն զուարծացելոց , ըստ գեղեցիկ ի մանկութենէ մինչեւ յաւագոյթ անդեանն , մանաւանդ առաւել ըստ աստուածագործ սրբութեան օրինադիր կրօնից , ամենայն կարգօք լի , արագ արագ առնէր զպատամբանին . Ոչ արժան , ոչ պատշաճ , ասէ , մերոյ չափոյ հասակի կեղծաւորութեան մոանել ընդ սրբութեան խոստովանութիւն : Իցեն բազումք ի մանկուոյ այտի որ ընդ ակամբ հայիցին , կարծիս ի մտի գնիցեն և ասիցեն՝ եթէ Եղիազարոս , իննանամեան , անցեալ ծերութեամբ , հասեալ ի դուռն վախճանի , յայլազգութիւն գարձաւ : Եւ նոքա վասն իմ կեղծաւորեալ գայթակղեսցին . և զայս խիզճ մտաց և կեղտ անուն ծերութեանս յաշխարհի թողից : Իսկ արդ եթէ ամենեւին նոյնչափ ժամա-

նակս կենաց չնորդիցեն ինձ , և ի ձեռու մարդկան բնաւ այլ ոչ մատնիցիմ , սակայն յաւիտենից ի մշտնջենաւոր ձեռաց անտի ո՛չ կենդանեօք և ո՛չ յետ կենդանութեան ուրեք փախտէլ կարիցեմ : Վանն այսորիկ քաջութեամբ փոխեցայց յաշ-խարհէ աստի , զի արժանի խնոյ ծերութեանս երեւեցայց , և օրինակ բարեաց և առաջինութեան մանկուոյ թողից , զի յօժարութեամբ և քաջութեամբ ի վերայ սրբութեան օրի-նացն մահու չափի ջանալ մարթասցեն : Զայս ամենայն իրրե ասէր , ինքնակամ դիմագրաւ կամակար ի վիշտու մահուն և տանջանացն դիմէր : Նոքա որ յառաջադոյն չուրջ մատուցեալ միսիթարէին՝ զբանս միսիթարութեանն ի թշնամութիւն դար-ձույանէին ; և զիմաստութեան խորհուրդն իբրեւ մոլորու-թիւն համարէին : Նա իրեւ մերձ եղեւ ի տանջանաց անտի ի վախճան , երաց զբերան իւր հեծեծելով , սկսաւ խօսել ի Տէր որ ունի զգիտութիւն սրբութեան խորհրդոց , և ասէ . Այս մի ինչ յայտ եղեւ , եթէ ի ձեռու իմ էր արձակել ի մա-հուս վշարաց , այլ ես զայս խստութեան տանջանս քաղցրու-թեամբ վասն ահի սաստիցն Տեառն ընդունիմ : Եւ սա զայս օրինակ պատերազմեալ յաշխարհէ փոխեցաւ :

Եօթն եղբարք վկայեն հանդերձ մարբն իւրեանց :

«Դէպ եղեւ եւթն եղբարս մարբն հանդերձ կալեալս ածել յատեան թագաւորին : Ի խոշտանգանս գանի տագնաստէին ուտել խոզենի : Մի ի նոցանէ նահատակեցաւ յառաջադոյն , սկսաւ խօսել և ասէ . Զի՞ կայք անցեալ , կամ զմեզ զի՞նչ հարցանելոց էք . մեք պատրաստ եմք ի մեռանել քան անցանել ըստ օրէնս հայրենիս : Հարկութեամբ սրտուտութեամբ լի եղեւ թագաւորն . հրամայեաց ջեռուցանել տասլակս և կատսայս և անիւս և պէսպէս գործիս տանջանաց պատրաստել : Զայն իբրեւ վաղվաղակի ջեռուցին պատրաստեցին , հրամայեաց զնահատակն յառաջ կացուցանել , և նախ զլեզուն կարեցին , և զդլայն մորթն զերեսօքն դարձուցին . ապա զոտս և զծեռս առաջի մօրն և եղբարցն ծայրաքաղս առնէին : Եւ ապա ի-բրեւ ի բանից և ի ձեռաց անպիտան առնէր , հրամայէր կեն-դանւոյն ի տասլակս ջեռուցեալս իջուցանել : Ապա իրեւ ձենձերն ընդերկար այնպէս ի տասլակէ անտի ելեալ դիզա-

ցեալ ծառանայր , սկսան եղբարքն ընդ միմեանս մարքն հանդերձ միմիթարել և ասել . ‘Փաջութեամբ մեռցուք , զանուն և զոգիս ժառանգեացուք . հայի Տէր Աստուած ի ճգնութիւն պատերազմիս մերոյ , և ի ծառայս իւր միմիթարի , որպէս յայտ յանդիմանութեամբ ասաց Մովսէս յօրհնութեան իւրում . Եւ ի ծառայս իւր միմիթարի : ’ Իբրեւ առաջինն զօրինակ զայս յաշխարհէ փոխեցաւ , զերկորորդն ի տեղի տանձանացն մատուցանէին , և զգլայոյն մորթն վարսիճքն հանդերձ զերեսօքն արկանէին , և անդէն հարցանէին . ‘Կերիցե՞ն խոզնի միս , մինչեւ զամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է : ’ Նա ետ պատասխանի իւրեանց բարբառովն և ասէ . ‘Ոչ , վասն այսորիկ և սա ի նոյն տանջանսն տանջեալ վախճանէր : ’

(Մատուցի յառաջ)

Ա. Մ. Գ.

ԱՐԴԻ ՄԱԶԴԵԶՈՒԽԸ ՈՐ ՊԱՐՍԻՔՆ ԿՈՉԻՆ

Ի պաշտօնարկուաց անտի Զրադաշտական կրօնից , որոց թիւ չէ այժմ աւելի քան հարիւր հազար , և որք կան ցիր և ցան յայլ և այլ կողմանս աշխարհի , իբրև մի կէսն , կամ ոչինչ աւելի քան 48 397 ըստ աշխարհագրի ամին 1881 , բնակին ի Պոմազայ : Զտոյանէ ասի , ոչ յանիրաւի , թէ են «աղ» ժողովրդեանն այնորիկ , այն է աղնուագոյն մասն նորա : Աղդեցութիւն նոցա ի գործ կրթութեան և քաղաքային կարգաց չէ արդարև ըստ թուոյ նոցա : Բազում ինչ նպաստ լեալ են նոքա ի դաստիարակութիւն . մարդասիրութիւն նոցա ոչ գիտէ սահման և է արդարև համաշխարհական : Նոքա հորդեցին ճանապարհ յազառութիւն անդը կանանց ազգի , ետուն օրինակ բարեաց կալ մնալ հաւասարիմ իրիտանական գահուն , և մեծաւ եռանդեամբ և նախանձու գալ զեւրոպական հրահանգօք : Այսչափ ծաղկելն և բարգաւաճել Պոմպայ քաղաքի բազում իսկը նոցա չնորհ է : Աստի մինչեւ յառաջ քան զքառասուն ամ ողջոյն տուրեւառիկ փոփոխումն ի նաւահանգստի անդ մեծի քաղաքին էր ի նոցա ձեռս : Նոքա

կանգնեցին դրամասեղանս և ընկերութիւնս , և այլ եւս բա-
զում ինչ մեծամեծ ծախիւք : Ոմն ի նոցանէ , տէր բազում
մթերից արծաթոյ , ետ շինել յամին 1854 զառաջին գործա-
նոցն շոգւոյ ի տարազագործութիւն բամբակի : Նոքա եղեն
առաջին որ ձեռն արկին յաջողութեամբ ի գործ երկաթու-
ղեաց ի Հնդիկս , և գործ նաւաշինութեան ի Պոմպայ սկսաւ
ի ձեռն միոյ ի նոցանէ բնակելոյ ի Սուրադ , և պատճառ
համբաւոյ նաւաց շինելոց ի Պոմպայ է լաւութիւնն և ճար-
տարութիւն Պարսի գործաւորաց : Հոչակ համբաւոյ ժիր և
գործօն ժողովրեանն այնորիկ գայ նմա մանաւանդ յար-
դարութենէ անտի նորա և յուղութենէն ի տուրեւասու :
Ընչեղագոյնք ի նոսա որ եղեն իբրև ազգաւ միով կամ եր-
կուք յառաջ , որպիսի ասեն թէ էր ձեմիտ ոմն ձիմիպա ,
դիմեցին անչափ մթերս գանձուց վաճառականութեամբ ընդ
Զինացիս : Սակայն զպատեհութիւնն զոր մատուցին դաշինք
Նանքինու յամին 1842 , որպէս և մուտն գտանել շոգւով
նաւարկութեան , փութացան յօդուտ իւրեանց արկանել ի
կիր մանաւանդ Հրեայ կալուածատեարք ի Պոմպայ և ի Կալ-
կաթա , և մեծ մասն շահուն ի վաճառականութենէ անտի
ափիոնի Հոսէ այժմ յարկեղս սոցա : Պարսի վաճառականք
կրեցին մանաւանդ վնաս մեծ յանդգնագոյնս տալով զան-
ձինս տուրեւառիկ ընկերութեանց , զինի քաղաքային պատե-
րազմին Ամերիկայ , մինչև չինել նոցա յետ այնորիկ բաւա-
կան ոչ ի մթերել և ոչ ի ցրուել մեծամեծ գումարս ոսկւոյ
և արծաթոյ որպէս յառաջն : Բայց ընդ հակառակին , ըստ չա-
փոյ նուազելց մեծութեան նոցա , յաւելաւ փոյթ նոցա և
արթնութիւն : Խօթափելով զանձինս յանչափ մոլութենէ
վաճառաշահութեան՝ սկսան ջանալ պայծառանալ ի գպրու-
թիւնս և ի պաշտամունս տէրութեան , հանդերձ այսու և
հողագործութիւն որում խնամով միտ դնել է մին ի խստա-
գոյն հրամանաց քէշին իւրեանց՝ կորզէ այժմ զմեծ մասն եւ
արծաթոյ նոցա եւ փութոյ , և գործեն ոչ ոշդութեամբ ի-
բրեւ ճզմիք և կցիրք , այլ յօֆարագոյնս և ժրագոյնս , և
ոչ առանց մեծի յաջողութեան :

Իբրև ի հազար ամաց հետէ Պարսիք վարին Կիւզարաթ-

լեզուաւ որ է հասարակաց լեզու արեւմտեան Հնդկաց , իբրև
իւրեանց մայրենի բարբառով : Ուսանել ուսանին և այժմ
անգղիերէն գրեթէ յամենայն դպրոցս , այլ խօսել , որպէս
և դուն ինչ սպարսկերէն , սակաւք ոմանք ի գիտնոց հազիւ
մարթեն : Ժողովուրդն սովոր է կալ յազօթս լեզուաւ որոյ
գիտութիւն ի վազուց հետէ խափանեալ է , և ոչ իմանայ
զոր ատէն : Յառնել հին զանդիկ կամ աւետեան լեզուին մե-
ռելոյ է գործ եւրոպական բանասիրութեան : Ինչ ինչ ի
նուիրական գրոց անտի որ զենդաւեսան կոչի՝ թարգմանեալ
է արդարեւ ի լեզու պահլաւիկ . այլ գիտութիւն զանդիկ
լեզուին չգոյր ի միջի , մինչև Եւգինէոս Պրնուֆ , յամին 1833,
հան ի վեր զուսումն լեզուին այնորիկ ի գիրսն որ կոչի «Մեկ-
նութիւն յԽասնա : » Դոյզն ինչ մասն յԱւեստեան գրոց հա-
սեալ է առ մեզ իրեւ մնացորդ ինչ ի նաւարեկութենէ :
Ի քսան և մի գրոց անտի ըստ աւանդութեան՝ մին միայն կայ
ողջ բովանդակ , այն է «Վենդիդադն , » մատեան որոյ կա-
րեւորագոյն մասն է զարբութենէ և զբարոյից . այն է զօրը-
բելոյ զանձն ի պղծութեանց և զվարսն ուղղելոյ . մնացեալ
մասն է ժողովածոյ աղօթից զորս մատուցանեն ստէպ և' հա-
ւատացեալք ջերմք առ տնին , և' առաջնորդք քէշին ի հա-
սարակաց պաշտամունս : Աւեստայն որ առ մեզ հասեալ է՝
չէ մատեան հրամանաց և վարդապետութեանց քէշին , այլ
է մատեան աղօթից : Փոյթ Եւրոպացւոց յուսումն մատենիս
այսորիկ հնոյ թուեցաւ հաճոյ Պարսի ժողովրդեան ի Հնդիկս ,
և վառեաց զեռանդն նոցա : Վենդիդադն յաւելուածովք ինչ
որ յետնոյ ժամանակի են՝ թարգմանեցաւ ի ձեռն գիտնոց
ոմանց ի նոցանէ ի բարբառ Կիւզարամթայ , և բազումք գան
այժմ խնամով զուսամիք քէշին . քաջալերեալք ի հետազօտել
մանր և տալ մեկնութիւն գտակաւ : Յոյս մեծ է թէ յայն
չափ հասանիցէ ուսումն և պաշտօն քէշին , զի եթէ Զրա-
դաշտ գլխովին յառնէր յերեքհազարամեայ մեռելութենէն ,
գտանէր ըստ ամենայնի համ և հաւան : Վարդապետութիւն
քէշին է միաստուածութիւն սեռն և անապակ . բազմաս-
տուածութեան կղկղանք կռուեալք ի նա՝ ցամաքեալ իմն են
և ի բաց թօթափեալ և շփշիելոյ անտի քէշին ընդ Հրէու-

թեան , և ապա ընդ Քրիստոնէութեան , և ասու ուրեմն ընդ Մահմետականութեան : Ծածուկ ամենաստուածութիւնն իայ մնայ իբրև եկամուտ իմն և օտարոտի . իսկ երկուութիւնն կայ որպէս ի սկզբանն թերակատար իմն փիլիսոփայութիւն զբարւոյ և զշարէ : Ի մեղադրանաց զկրակ պաշտելց իբրև զկուոս ամենեւին իսկ ազատ են Պարսիք : Զրաքարտութիւնն լոկ են ստգտանքն ի չարամիտ և ի չարակամ կուրութեանէ հակառակորդաց : Զրադաշտ ընկալաւ զհին արիական պաշտօն հրոյ , արարեալ զրարերարն զայն տարր և զգլսաւոր գործին քաջաքաւորութեան ոչ իբրև պաշտելի ինչ , այլ իբրեւ տաճար : Եւ այժմու Պարսիքն գիտեն այսպէս : Հուրն սուրբ որ վառի անշէջ յատրուշանս նոցա՝ է ազդելի և երեւելի նշանակ աստուածութեան , և նպաստ զմիտոն ի վեր համբաւնալց : Թերեւս աւելի քան զայս համարէին կանխառ ոչ ռամիկն միայն , այլ և մողքն : Եւ այս անտի մանաւանդ յայտնի է զի մերքն , Եզնիկ և Եղիշէ , որ զվարդապետութիւն մոգուց միայն գիտէին՝ կարի իմն ձախող նկարեն զբէշն : Եւ գոյ իսկ արդարե ի մեծարանսն զոր ունի քէշն զտարերաց , զհրոյ ասեմ և զջրոյ , նուրբ իմն հոտ նախնի մարդկան որ զբնութիւն պաշտէին : Այլ այն մեծարանք հրոյ և ջրոյ ի կրօնս արիական ազգին ի բնէ չէր աւելի մեղադրելի քան քրիստոնէական այլասացութիւնն զմկրտութեանէ ի հուր և ի ջուր , երկուց որբիչ զօրութեանց , յորս օրինակի սրբարար ազդեցութիւն աստուածեղին հոգւոյն :

Գլխաւոր օրէնք կրօնից առ այժմու Պարսիս են արգելք , այն է պատուէրք ի բաց կալոյ մանաւանդ յիրաց իրաց , որպէս ի մեզ ժխտական հրամանք Մի՛ չնայցեսն , և Մի սպանանիցես և Մի գողանայցես , քան հրամանք գործելց , որպէս « Սիրեսցեսն զընկեր քո , » և « Պատուեա զհայր քո և զմայր : » Յարգելականաց անտի են չծխելն , չխափուցանել կամաւ զկրակ , չերթալ ի հասարակաց բաղանիս , չկոխել բոլ ոտամբ զգետին , չպղծել զհուր կտոմ զջուր , այսինքն մի պիղծ ինչ արկանելի նոսաւ : Եղիշէ յաւելու և այլ եւս ինչ ինչ որ արգելեալ էր յիւրում ժամանակի . « Պատրուծակը մի մեռցին անյաղ , եթէ յօդեաց իցէ և եթէ յայ-

ծեաց , և եթէ յարջառոց և եթէ ի հաւուց և եթէ ի խոզաց : Հայսք առանց փանդամի մի զանգցին . ծիւղք և քակորք ի կրակ մի եկեսցեն . ձեռք առանց գոմիզց մի լուասցին . չնջրիք և աղուէսք և նապաստակք մի մեռցին . օձք և մողէզք , գորտք և մրջմունք , և որ այլ եւս խառնավինդոր բազմաճճիք՝ մի կայցեն , » այլովքն հանդերձ :

Կրել գլուստէն , այն է զգոտին նուիրական , է առանձինն նշան զրադաշտական կրօնից : Գոտին է լար ասուեղէն , ողորեալ յեօթանասուն և երկուց թելոց , ի նշանակ եօթանասուն և երկուց գլխոց նասնայ , և ածի երիցս զմիջով առ ի տալ յիշել զերրեակ պատուէրս ի զգուշութիւն խորհըրդոց , բանից և գործոց , և պնդի չորիւք հանգուցիւք ի պատիւ միոյ միոյ ի չորից տարերաց : Համառօտ ինչ ազօթք մատուցանին ի կապելն և ի լուծանել : Յառաջնում նուագի անդ ածելոյ զգօտին առ նորընծայն՝ սպասաւորեն պատանիք չորք և աղջկունք չորք եօթնամեայք , և որ ածէն զգօտին՝ համարի մշանցենապէս նուիրեալ ի պաշտօն զրադաշտական : Ի նմանութենէն զոր ունի ընդ նուիրական ասզանւոյ Պրահմանաց , յայտ է թէ յանցիշատակ ժամանակաց գայ սուրութիւնն :

Զէ ստուգիւ յայտ թէ Արարատեան , կամ , ընտանի անուամբ , Հայ ցեղն արիակա՞ն էր թէ դուրանեան , կամ , մերոց գրացեաց Պարսից բանիւ , յԱրեաց թէ յԱնարեաց : Վերջինն գէթ այնչափ հաւանութեան թուի որչափ առաջինն : Սակայն որպէս զանդիկ լեզուն , նոյնպէս և կրօնք , շահեալ տիրէր , նա ընդմտանէր իմն ի ներքին կեանս Հայոց ի ձեռն գրացի , նա մանաւանդ խնամի ազգին Մարաց (Մտրաբ. ԺԴ.) որ օղակ իմն էր ի կցել զիհւսային դուրանեանս ընդ հարաւային Արեաց : Թողեալ զերազելն ումանց որ զկարծեցեալ նահապետ ազգին դնեն առ նախանձու աստուածպաշտութեան փախուցեալ յերեսաց ուրումն ჩելայ , գրեթէ պատմական է թէ , զոր օրինակ յունական դիցապաշտութիւնն վաղ ուրեմն եգիտ մուտ յարեւմտեան մասին Հայոց , նոյնպէս , թերեւս կանխագոյն իսկ , արիական պաշտօն կրակի իւրով թանձր կերպարանաւ եգիտ ընդունելու-

թիւն մեծ յարեւելեան մասին : Արդարեւ զարմանալի է զի , մինչ արեւմոեան գաւառք Մեծին Հայոց , սահմանակիցք դիցապաշտն կապագովիիաց , Դարանաղիք , Դերջան , Եկեղեց , Տարօն , են մեկենազարդք , լի բագնօք նուիրելովք Անահտայ , Վահագնի , Աստղկան , և այլոց աստուածոց յունական դիցապաշտութեան , հանդերձ առանձինն քրմական ցեղիւ Վահունեաց , յարեւելեան գաւառս , ի Սիւնիս , ի Վասպուրական , և ոչ իսկ յԱյրարատ , գոյ այնպիսի ինչ իրաց յիշատակութիւն : Աստ ուրեմն ի սկզբան տէրութեանն Սասանեանց , ջերմ կրակապաշտից , գտանեմք ի նուիրական քաղաքին Բագաւան պատկերս նախնի թագաւորաց , որպէս և արեգական և լուսնի , առեալս ի պաշտօն , զորս տայր փշրել երկրորդն ի Սասանեանց Շապուհ (ըստ Խորենացւոյն՝ Արտաշիր) ի մտանել իւրում ի Հայս . բայց առընթեր նոցա գոյր և առանձինն բագին Որմզդական հրոյ , զոր « անչէջ հրամայէր լուցանել » նոյն Շապուհ , ըստ Խորենացւոյն վկայութեան , որ չէ օտար ի ճշմարտութենէ , եթէ չիցէ եւս ճշշմարիտ :

Ա. Մ. Գ.

ԳԻՏՆԱԿԱՆ

ԸՆԹԱՑՔ ԵՒ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԽԹ ՍԲԻՒԹՆԱՆ

Ի ՎԱՂՈՒՑ ՃԱՄԱՆԱԿԱՑ ԱՆՏԻ ՄԻՒԶԵԻ ՑԱԽՈՒՐՍ ՄԵՐ

Հանգամանք զիտութեանց առ նախնիս Յունաց եւ Հռոմայեցոց . — Էնախօսութիւն եւ անդամազնութիւն յառաջ քան զգաղիանոս . — Ազգեցութիւն անդամազնին այնորիկ . — Գիտութիւն ի Միջին դարու . — Մշակութիւն գիտութեանց առ Արաբացիս . — Վեզալ եւ բնախօսք Նորածնութեան (Renaissance) . — Հարվէյ , Հալլէր եւ արդի բնախօսք . — Նպաստք որ մատուցան բնախօսութեան ի ծեռն գիործական զիտութեանց . — Ազդեցութիւն բնախօսութեան ի յառաջադիմութիւնս թշկութեան . — Պատշաճնել զիտոնական ծանօթութիւնս յուսումն ճշգրիտ ընթացից հիւանդութեանց եւ յուսումն ճշմարիտ ազդեցութեան դեղոց . — Արդիւնք որ ածան ի մէջ ի կիրն արկանելոյ սկզբունս ինչ զիտոնականս . — Անեղծութիւն զօրութեանց եւ նիւթոյ . — Կնիք բանի :

Առ ի քաջ առնուլ ի միտ զյառաջադէմ զարգացմունա
գիտութեան իրիք, յետս կոյս զաշս դարձուցանել պարտ է
և համեմատել զայն որ էրն յառաջագոյն՝ ընդ այնմիկ որ իցէ
զարդիս, ըստ պէսպէս փոփօխմանց : Խելամուտն եւեթ լինել
ազգի ազգի գժուարութեանց ընդ որս ընդհարաւ ցանկ
հանճար մարդկեղին ընդ բոլորմունս դարուց՝ տայ ապաքէն
հասու լինել ընդելական ընթացից մոտաց մարդոց, և կալ ի
վերոյ սկզբան հետազոտութեանց որ ի գիւտս մեծամեծո
առաջնորդ մարդկան լինին :

Եթ յորոց մեքս սերեցաք՝ երեւեցան զառաջինն ի վերայ
երկրի ի հեռաւոր բացարձակ ժամանակի, զոր երկրախօսու-
թիւն արդեաց ձգեալ հասուցանէ մինչեւ ի խորս դարուց
հազարաց :

Առաջին մարդիկ, ի բաց ամենեւին ի նմանելոյ մոտացա-
ծին նկարագրաց զորպիսիս առաջի առնեն մեզ առասպելք
հնութեան, եղեն տղէտք վայրենամիտք . ոչ գիտացին զօրէնս՝
եթէ ոչ զզօրութիւն բազկի, և միտէին հանապազ ի չար իմն
էութենէ գնել զերեւոյթս զոր ոչ կարէին առնուլ ի միտ :
Ապաստան ի խորս մայրեաց՝ բնակէր մարդ ի քարայրի ու-
րեք, հալածական արարեալ անտի զանասունս անտառաց .
բեկորք ինչ գայլախազի, յորոց նշխարք ինչ մնացորդաց
ի յայտ գան առ մեօք, էին նոցա ի տեղի զինուց :

Ըստ աճել պիտոյից գնային մարդիկ ի կատարումն, և լի-
նէր սկիզբն ձեռագիտութեան . ամս զհետ գայր ճարտարու-
թիւն արուեստից կամ արուեստգիտութիւնն, և ապա գիտու-
թիւնք առ հասարակ :

Գիտութիւնք, ընդ չարս դարուց բազմաց ամիտոփեալք
ի սնուոի կարծիս զբնութենէ իրաց, էին յառաջին ժամանակս
անդ որպէս այլ ընդ այլոյ վարդապետութիւնք անօգուտք
ամենեւին ի ստոյգ ծանօթութիւն օրինաց տիեզերաց :

Այսպէս եղեւ ընդ երկար . այլ և ի ծաղկաւէտ աւուրս
անդ հնոցն Յունաց և Հռոմայեցւոց, ի ժամանակի յորում

մարդ , տէր աշխարհի , կարէր ունել հաւատս՝ եթէ չէր հնար թէ այլ իմն քաղաքաւորութիւն վերագոյն անցանիցէ զանցանիցէ զիւրովն , չեւ էր լեալ սկիզբն փորձական գիտութեանց :

Ամենայն փորձ , համարեալ որպէս անարժան ինչ կիրթ մտաց , տայր տեղի կարծեաց փիլիսոփայութեան , և արք խորհրդոյ իսկ անուանիք յոյժ Աթենացւոց քաղաքին և Հռոմայ կասկած ի մտի ոչ ունէին՝ եթէ ի կիր արկումն փորձոց ինչ մարթէր յայլ կերպ փոխել ամենեւին դհանդամանս էութեան մարդկեղէն զանգուածոյ :

Ոչ ածէր ոք զմոտաւ ի խոյզ և ի քնին արկանել զատոյգ պատճառս երեւութից բնութեան . այսպէս , յառաջին ժամանակս անդ ազգի մարդկան , կարի իմն պարզ թուէր փիլիսոփայից մեկնել զամենայն ինչ խորհրդաւոր ազգեցութեամբ բարձրագոյն կամաց . Արամազդ արձակէր զշանթս , Դեմետրէ տայր հասանել հնձոց , առ աղքերք իւրաքանչիւր գետոյ բնակիէր մի ոմն ի կանանց դից : Փամանակ հնութեան նոյր զբնութիւն աստուածովք իւրովք :

(Մատուցի յառաջ)

Յ. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի ԳՐՈՅ ՏԵԼԵՄԱՔՈՅ

Չեւ աւուրն երրորդի լրացեալ , մինչդեռ նոքա յայսմ խորհրդի էին , տեսանէին ի զառ ի փայրի լերանցն մօտաւորաց փոշի մրտկեալ որ ելանէր ամբառնայր ի վեր երկնապող . յետոյ նշմարէին ամբոխ բանակի խուժադուժ ազգաց սպառազինելոց : Հիպերիացիք էին սոքա , արք ժանտոք գազանարարոյք , որ զովոզ ունէին իւրեանց և ընկերս զազգսն զայնոսիկ որ բնակին ի լերինս ներբոտայ և ի բարձունս Արկա-

գայ, ուր շահեալ տիրէ կարէ ձմեռն ձմերայնոյ զոր զեփիւռք ընաւ ոչ մեղմացուցանեն: Որք զկանիսախօսութիւնն արհամարեալ էին զՄենտորի՝ կորուսին զգերիս և զանդեայս իւրեանց: Յայնժամ ասէ արքայն ցՄենտոր. Բայ, այլ ոչ եւս կամիմ ես յիշել թէ յոյն իցէք դուք: Որ թշնամիք մեր էին՝ արդ բարեկամ հաւատարիմ եղեն մեզ: Դիք առ ի փրկել զմեզ առաքեցին զձեզ. և եւս ոչ պակաս ունիմ ակն յարութենէ քաջութեան քոյ քան յիմաստութենէ խորհրդոց քոց: Օ՞ն առ, փութա լինել մեզ օգնական և սատար:

Յաշու անդ Մենտորի էր տեսանել հայեցուածս յանդրգնութեան և խրոխտանաց որ և զկարի սէգս ի պատերազմողաց ահարեկ առնէին: Վասեալ էր նա ի զէն և ի զարդ և ունէր ի ձեռին ասպար և սուսեր և արդն և սաղաւարտ ի գլուխ իւր: Կարդէր կազմէր զզօրսն Ակեստեայ և անցեալ ի գլուխ գնդին յարձակէր ի վերայ թշնամեացն: Ակեստէս թէպէտ աներկիւզ էր և քաջասիրտ, սակայն առ ծերութեանն ի հեռուստ միայն երթայր զկնի նորա: Իսկ ես մօտագոյնս գնայի զհետ նորա, բայց ոչ հաւասարէի զօրութեան և քաջութեան նորա: Զրահն ի կուուի անդ թուէր իմն թէ անմահ նզիսն իցէ: Ի հարուածոցն զոր հարկանէր՝ ոստնոյր ընթանայր մահն ի դասէ ի դաս զօրուն թշնամեաց: Կարի նման էր նա առիւծու նումիգեայ որ նքողեալ ի քաղցուէ մօտանիցէ ի փարախ ոչխարաց և գիշատեալ փողոտեալ որ միանգամը չուրջ գտանիցին՝ լուզայցէ ի ճապաղիս արեան. իսկ հովիւքն, փոխանակ ի թիկունս հասանելոյ հօտին իւրեանց, սրտաթափ սրտաթունդ ի փախուստ դառնայցէն՝ առ ի զերծուցանելոյ զանձինս իւրեանց ի կատաղութենէ գազանին:

Գունդ բարբարոսիկ ազգացն այնոցիկ, որ ի մտի եդեալ էին յանկարծակի յեղակարծումն տիրել քաղաքին, ինքեանք ի գլխովին ըմբռնեալ լինէին յանզգտաստ: Իսկ մարդիկն Ակեստեայ սրտապնդեալ յօրինակէ անտի և ի պատուիրանաց Մենտորի՝ բազում արութիւն քաջութեան գործէին, որում ինքեանք իսկ զանձինս բաւական ոչ համարէին: Զորդի արքային նոցա հարեալ նիզակաւ իմով տապաստ յերկիր արկանէի: Ի նոյն տիս հասակի էր նա, բայց հուժկու առաւել և

յաղթագոյն էր քան զիս . քանզի սերէր գայր ազգն այն ի
տոհմէ անտի . հսկայից որոց մի և նոյն սկիզբն է ծննդեան
ընդ կիկոպայս : Արհամարհեալ քամահէր նա զոսոխ մի նկուն
և տկար , որպէս եսս էի . բայց ես , առանց ինչ զանգիտելց ի
մեծայաղթ զօրութենէ և ի ժանտատեսիլ վայրենի դիմաց
նորա , ձգէի զնիվակն իմ ի լանջս նորա և տայի նմա հոսել
արիւն սեաւ գունդ գունդ ընդ բերանն : Սակաւիկ մի եւս՝
և ճմիեալ էր զիս ընդ իւրեւ : Շաշիւն զինուց նորա , յանկա-
նել նորա ի գետին , թնդէր հնչէր մինչեւ ի լերինս : Զոր
ինչ ունէրն ըստ անձին՝ յափշտակեալ առնուի յաւարի և
դարձեալ գայի առ Ակեստէս : Իսկ Մենտոր , յետ ազմուկ ի
մէջ զօրուն արկանելց , սատակէր կոտորէր զնոսա և զիա-
խըստեայսն տանէր առաջի իւր մինչեւ ի ժաւուտս ան-
տառաց :

Ցաջողութիւնն Մենտորի յելս իրաց պատերազմին , որում
ակն ոչ ունէին , տայր ամենեցուն նկատել զնա իբրեւ այր մի
որ կարի սիրելի Դիցն իցէ և դրդեալ իսկ ի նոցանէ : Առ ե-
րախտագիտութեանն տեղեակ առնէր զմեզ Ակեստէս՝ թէ եր-
կիւլ էր մեզ և վտանգ բազում , եթէ երբեք նաւքն ինեայ
գային գարձեալ ի Սիկիլիա : Տայր մեզ նա նաւ մի առ ի գնալ
փութանակի յերկիրն մեր հայրենի և լնոյր զմեզ պարգեւօք
և բարեօք . և զի զառաջս կալցէ զաղետիցն զոր կանխաւ նը-
կատէր՝ ստիպէր զմեզ մեկնել հեռանալ անտի : Ոչ կամէր տալ
յազգէ իւրմէ ոչ նաւուղիդ և ոչ թիավարս , զի մի ի վտանգ
ինչ անկանիցին յափունս անդ աշխարհին Յունաց : Վաճա-
ռականս վիւնիկեցիս տայր մեզ , որ ի վաճառաշահս հատեալ
ընդ ամենայն ազգս աշխարհի՝ չունէին ինչ պատճառս եր-
կընչելց և , յետ թողլց զմեզ յիթակէ , դարձուցանելոց էին
զնաւն առ Ակեստէս : Բայց դիք ոք ծաղր իմն առնեն զիոր-
հըրդովք մարդկան՝ այլ վիշտս վտանգի սահմանեալ էին մեզ :

ՀԱՅԻՔ ԵՒ ԱԿԱԶԱԿՔ

Զորիք երկու անկան յուղի . զգլարսակ տու էր բարձեալ մին ,

Մեւսըն ստանմնեալ ունէր զարծան աղոյ մնարսին ,

Վերջինս այս պարծելով իմն ընդ գեղեցիկ բեռն այնպիսի ,

Կամի ո՞չ ի սփոխանաց սակա իսկ զընել զայն մեկուսի ,

Ընդողնելով իմն ի քայլ սէց

Հընցացնեալ զվրզին զանգակ :

Մինչ յանկարծնուս հասեալ հրոսակ՝

Արծաթոյն վասըն զայ ի զէց :

Ի շորտըն վերայ որ կրէր զարծանն իսկոյն անկանի հէնն ,

Արգելու զնա կալեալ զսանձէն .

Զորին ի զէց ունել մւտի , այլ ընդունայն .

Զարազա՞ն , չարսխա՞ց հնձէ . յուրոց հանէ հէքն այն .

Բա՞րէ , այս իցէ : ասէ . այն ինչ զոր ինձըն խոստացան ,

Զորիս այս որ զայ զիմ կի՞մ ի վրտանգին պրծաւ անջան ,

Մինչ ես , եղո՞ւկ , ըմբռունեցայ յայն՝ ի կօրուստ :

Ընկե՞ր , ասէ ցնա մեւսն անդուստ .

Զէ ինչ միշտ բարտոր ի մեծ ինչ ամբառնալ պաշտօն պատույ .

Երբն զի՞ս ի սպառն թէ մլազացի կացեալ էր քոյ ,

Անկանէիք ոչ յայդ ի վիշտ :

ԼԱՅՈՒԹԷՆ

Ա. Մ. Գ.

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

ՀԱՅԵՐԻՆ ՀԵԶՈՒԻԻ

Պ

ԳՈՒՄԱՐՏԱԿ ԱՌԵՆԵԼ . զբէր ժողվը՝ արյակէլ : *Գումարտակ արար ի վերայ նոցա սատակել զնոսա : — *Բնորեաց Վիւսիաս . . . արս հզօրս բարեկամն խորհրդականնս արքայի , և ընդ նոսա առնէր գումարտակ քառասուն հազար հեծեալ :

Գուն Գումել . հնարք՝ զանտ ընել . ոյժ առաւ . կը- սոս-էլ : *իրեւ հասին զօրքն , զաշտարակն պատեցին , և ի վերայ դրանն գուն գործեցին . . . զի զդուռն հրձիգ ա- րասցեն : — *Գուն եղեալ մեծաւ ճղնութեամբ քարոզեցին : — *ի վաստակս բարեաց գուն եղեալ մարտնչիցին :

ԳՈՒՇԱԿԱՆՈՐ ԼԻՆԵԼ . իւստակել . Պայտնէ ըլլէլ : *Յարնտա-
քին պաճուծանացն լինին գուշակաւորք :

Ի ԳՐԱՒԻ ԴՆԵԼ : Քրառի դնել : *Զանդաստանս մեր և
զայգիս դիցուք ի գրաւի , և առցուք ցորեան կերիցուք :

ԳՐԱՒԱԿԱՆ ԴՆԵԼ Ի ՄԵԶ . Քրառ բանել . դաշնու դնել :

*Գրաւական եղեալ (էր) ի մէջ վասն այսր բանիս :

ԳՕՏԻ ԱԾԵԼ . Քօտի կապել (էրն կամ ուրիշն) սօնտուիլ : *Ա-
մէն ասեմ . ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ , և բաղմեցուացէ
զնոսա : — *Պատրաստեա զինչ ընթրելոց իցեմ , և գօտի ա-
ծեալ պաշտեա զիս , մինչեւ կերայց և արթից : — *Եղիցի նմա
որպէս գօտի որ ածի հանապազ ընդ մէջ իւր : — *Յոր-
ժամ ծերացիս , ձեռն ի վեր կալցես , և այլք ածցեն քեզ
գօտի :

¶

ԴԱՇԱՄՈՒԽ ԼԻՆԵԼ . Երնալ դաշն մդնել (պատերազմէլ) :
*Եկին ագան այն օր ի Մովզիկիմ . ընդ առաւօտն կանխեալ
լինէին դաշտամուխ :

ԴԱՌՆԱԼ ԱԽՈՒԽ . էրինան ըլլալ : *Ահա դարձաւ օրս յե-
րեկս . ասաէն ագիր , և զուարթացի սիրտ քո :

ԴԱՏ ԱՌՆԵԼ . դարտարան կարել . էրտոննու ընել : *Դատ ա-
րացէ Աստուած ընդ իս և ընդ քեզ : — *Դատ արա ինձ ,
Տէր , զի ես յանքութեան իմում գնացի : — *Դատ արա
ինձ յոսոխէ իմմէ : — *Գոնէ վասն աշխատ առնելոյ զիս
այրւոյն՝ արարից նմա դատ :

ԴԱՏ ԴՆԵԼ ՎԱՐԵԼ . իւստանու ուղել . դարտուիլ : *Դատ ընդ
նմա դնիցես : — *Առաջի խալուեաց դատ վարէին , իրա-
ւունս դտանէին :

ԴԱՏԱՊԱՐՏ ԱՌՆԵԼ . դարտարտուիլ : *Արդ , ո՞վ է որ դա-
տապարտ առնիցէ (զընտրեալս Աստուծոյ) :

ԴԱՏԱՓԵՏ ԱՌՆԵԼ . անիւսա գեղը նեղը լուրինել . հարստա-
հորել : *Որդեակ իմ մատաղ , առ իս դարձիր , զոր բանսար-
կուքն բամբասէին և դատափետ առնէին :

ԴԱՏԻՄ ԸՆԴ ՈՒՄԵՔ . դադասուանի մռնել ուրիշի հեր . դա-
դուէլ : * Եղբայր ընդ . եղբօր դատիւ : — * Դատեցայց ընդ ձեզ ,
ասէ Տէր : — * Դատեցարուք ընդ մօրն ձերում :

ԴԱՏԻՄ ՃՐՈՎ . այրէլ : * Բայց թէ ընդ սոյն դարձայց խա-
ղաղութեամբ , զայն տաճար հրով դատեցայց : — * Երդնոյր
• • • զիայտակերտն հրով դատել , և զկաւակերտն ջուրբ
լուանալ :

ԴԱՐԻԻ ԵՒ ԴԱՐԻԻ ԳԱԼ . (էւրէ ՀԵՂԵԱ) Բնէւ վեր կցուած :
* Յորդանան լցեալ գայր դարիւ և դարիւ , որպէս յաւուրս
հնձոց ցորենոյ :

ԴԱՐԱՀՈՍ ԱՌՆԵԼ . վերէն ՀԵՐ՝ ԴԵՐԱՀԵՐ ՀԵԼ : * Զանձինս
դարահոսս . . . առնել ի խորխորատ : — * Դարավէժ դարա-
հոս անձամբ զանձինս առնիցեն :

ԴԱՐԱՀՈՍ ԼԻՆԵԼ . վերէն ՀԵՐ՝ ՀԵՐԱՀԵԼ : *(ի) Յատակս իսկ
մեղացն դարահոս լինէր : — * Ա. իմօք դարահոս լինիցիս :

ԴԱՐԱՆԱԿԱԼ ԼԻՆԵԼ . Դարան հորժել . Դարանի մռնել : * Դա-
րանակալ եղեն նմա առ դրան քաղաքին : — * Ա. ամենայն
անկեան դարանակալ լինի : — * Յանձուկս դարանակալ եղեն :

ԴԱՐԱՆԱՑԶԱ ԱՌՆԵԼ . աղէն նայէլ . զէռաշնալ (որդայնէ) :
* Առաքեաց արքայն Խարայելի ի տեղին զոր ասաց նմա Եղի-
սէէ , և դարանայոյզ արար զնա :

ԴԱՐՁ ԱՌՆԵԼ . Դարնալ : * Յարուցեալ Լաբան ի վաղիւ
անդր . . . գնաց՝ դարձ արարեալ ի տեղի իւր : — * Դարձ
արար անդրէն ի կողմանս Անտիքացւոց :

Կամ՝ ԴԱՐՅԱՆԵԼ . արյանէլ : * Դարձ առնէր ամենայն գեր-
ութեանն :

ԴԱՐՁԱԴԱՐՁ ԱՌՆԵԼ . իրին Դարնալ . շուր շուր Դարնալ .
Նորդանէլ : * Խռովութիւն ընտանեաց դարձադարձ առնէ
անդրէն :

ԴԱՐՄԱՆ ՏԱԼ . ՏԱՆԵԼ . հոփալ . նայէլ . խնամէլ : * Հրամայ-
եաց տալ զամենայն դարման : — * Դարման տար սմա . — * Ե-
թէ երկնից և երկրի դարման տանիցիմ : Յ. Գ.

ՊԱՅՄԱՆՔ

Ա. Գին միամեաց բաժանորդութեան Հանդիսիս՝ 25 դահեկան ոսկեոյ, հատուցանելի կանխառ.

Բ. Ծախսք թղթատարի ի գաւառս և յերկիր օտար դահեկան արծաթոյ 6 ի տարւոջ.

Գ. Զգին բաժանորդութեան, զթուղթ և զամենայն գիր առաքել պարու է, յանուն խնամակալաց Հանդիսիս, առ Տ. Յովսէփի Գալաֆեան, գրավաճառ ի Կ. Պոլիս, ի Զաքմաքնըլտր.

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիս մարթ է ստանալ 3 դահեկանաց առ ամենայն գրավաճառս Կ. Պոլսոյ:

Վ. Բ Ի Պ Ա Կ Ք

(ի ք. թուիթ)

Էջ	Տող	Վըպակ	Ռողիդ
94	22	Լեզուաբանութեան	Լեզուաքննութեան.
95	11	այժմու հայերենին	այժմու հայերենիւ.
96	20	Բազարութիւն	Բազարութիւն.
98	8	Ի ԳԻՐ ՀԱՐԿԱՆԵԼ	Ի ԳԻՐ ԱՐԿԱՆԵԼ.

مَعْرِفَةُ

بَلْكَانِيَّةِ

معارف نظارات جليله سنك ٩١٠ نومروني رخصتنامه سمه طبع او نشدر